ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2016 թվականի N 99-Ա

«Ա□ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԱՊԱՆԻ N 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1□16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 25-ի «Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքները կազմակերպելու մասին» N 862-Ա որոշման պահանջները, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության «Կապանի N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված 1574 քառակուսի մետր մակերեսով տարածքը ժամանակավոր տրամադրել «Ա□Մարգարյանի անվան Կապանի N 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ հանրակրթական ծրագրերով աշակերտների բնականոն ուսուցումը իրականացնելու համար:

2. «Կապանի N 6 հիմնական դպրոց» և «Ա□Մարգարյանի անվան Կապանի N 7 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ կազմակերպությունների ծախսերի կատարման նախահաշվային գումարների շրջանակներում փաստացի ծախսվող էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և կոմունալ այլ ծախսերի վճարումները 2016 թվականի հոկտեմբերի 1-ից իրականացնել համամասնորեն՝ համաձայն կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **Վ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2016թ. հոկտեմբերի 24
ք. Կապան